Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
ապրիլի 16-ի N 570 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
փետրվարի 21-ի N 218 - Ն որոշման

Մ Ե Թ Ո Դ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն իրավական ակտով կարգավորվում են ներմուծվող սննդամթերքի ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը և գնահատված ռիսկերի հիման վրա սահմանային հսկողության (այսուհետ՝ վերահսկողություն) հետ կապված հարաբերությունները, որի նպատակն է վտանգավոր սննդամթերքի ներմուծման կանխումը, ինչպես նաև սահմանային անցման կետերում պետական վերահսկողության համապատասխան գործիքակազմի (փաստաթղթային ստուգում, նույնականացում, զննում, նմուշառում, փորձաքննություն) ընտրության իրականացումը՝ կախված սննդամթերքի ռիսկայնության աստիճանից:

2. Սննդամթերքի ներմուծման սահմանային պետական վերահսկողության ընթացքում իրականացվող գործիքակազմի ընտրությունը հիմնված է ներմուծվող սննդամթերքի ընդհանուր ռիսկի վրա, որն իրենից ներկայացնում է ըստ սննդամթերքի տեսակի ռիսկերի, յուրաքանչյուր սննդամթերքին բնորոշ (անհատական) ռիսկերի և ռիսկայնությունը որոշող այլ չափանիշների հանրագումար:

2. ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՏԵՍԱԿԻ

3. Ռիսկն ըստ սննդամթերքի (արտադրանքի) տեսակի դասակարգվում է բարձր, միջին և ցածր ռիսկայության՝ համաձայն N 1 աղյուսակի:

N 1 աղյուսակ

Ռիսկայնությունը՝ ըստ սննդամթերքի (արտադրանքի) տեսակի

Արտադրանքի անվանումը		**Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ)**	**Ռիսկի միավորը**
	Բարձր ռիսկային (10-20 միավոր)		
Միս և մսից սննդային ենթամթերք		0201- 0210	**20**
Ձուկ և խեցգետնակերպեր, կակղամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ		0301-0308	**20**
Պատրաստի սննդամթերք մսից, ձկից կամ խեցգետնանմաններից, կակղամարմիններից և ջրային այլ անողնաշարավորներից, պատրաստի կամ պահածոյացված ձուկ, ձկնկիթ		1601-1605	**15**
Կաթնամթերք		0401-0406, 2105	**15**
Թռչնի ձու		0407-0408	**20**
Կենդանական ծագման սննդամթերք՝ այլ տեղում չնշված կամ չներառված		0410	**15**
Մթերքներ սոուսներ պատրաստելու համար, պատրաստի ապուրներ ու արգանակներ		2103-2105	**10**
Կենդանիների (բացի ձկների) աղիներ, պարկեր և ստամոքսներ, ամբողջական և կտորներով, թարմ և սառեցված, աղաջրում և աղած, չորացված և ապխտած		0504	**20**
Մակարոնեղենային արտադրանք լցոնով, ջերմային մշակման ենթարկված կամ չենթարկված, կամ այլ եղենակով մշակված		190220	**15**
Սպիտակուցային խտանյութեր և թելիկավոր և շերտավոր սպիտակուցային նյութեր		210610	**10**
Վիտամինների և հանքային նյութերի խառնուրդ, նախատեսված սնուցման		2106909803	**15**

հավասարակշռված լրացման համար			
Ձուկ՝ չորացրած, ապխտած, աղ դրված կամ աղաջրի մեջ դրված		0305	**15**
Վաղ հասակի երեխաների համար նախատեսված պատրաստի սննդամթերք, նախատեսված մանրածախ առևտրի համար		1901100000	**20**
	Միջին ռիսկային (4-9 միավոր)		
Բանջարեղեն և որոշ ուտելի արմատապտուղներ և պալարապտուղներ		0701-0714	**9**
Ուտելի մրգեր և ընկույզներ. ցիտրուսային պտուղների կեղև ու դդմի կճեպներ		0801-0814	**6**
Խեցգետնակերպեր չորացրած, աղ դրված կամ աղաջրի մեջ դրված.		0306	**4**
Կենդանական կամ բուսական ծագում ունեցող ճարպեր և յուղեր ու դրանց տրոհումից ստացվող մթերքները. պատրաստի սննդային ճարպեր		1501-1520	**9**
Կակաո և դրանից պատրաստված մթերք		1801-1806	**4**
	Ցածր ռիսկային (1-3 միավոր)		
Բնական մեղր		0409	**1**
Սուրճ, թեյ, մատե կամ պարագ-վայական թեյ և համեմունքներ		0901-0910	**1**
Հացազգիներ		1001-1008	**1**
Ալրաղացաձավարային արդյունա-բերության արտադրանք. ածիկ, օսլաներ, ինուլին, հացահատի-կային սոսնձանյութ		1101-1109	**2**
Յուղատու սերմեր և պտուղներ, այլ սերմեր, պտուղներ և հատիկներ		1201-1208	**1**
Շաքար և շաքարից պատրաստված հրուշակեղեն		1701-1704	**1**
Պատրաստի մթերք՝ հացա-բույսերի հատիկներից, ալյուրից, օսլայից կամ կաթից, ալյուրից պատրաստված հրուշակեղեն		1901-1905 (բացի 1901100000 կոդից)	**1**
		2001-2009	**1**

Բանջարեղենի, մրգերի, ընկույզ-ների կամ բույսերի այլ մասերի վերամշակումից ստացվող մթերք			
Սննդամթերք՝ այլ տեղ չնշված կամ չներառված		2106 (բացի 210610 կոդից)	**1**
Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ և քացախ		2201-2209	**3**
Կերակրի աղ		2501	**1**

4. N 1 աղյուսակում չներառված սննդամթերքի (արտադրանքի) տեսակի ռիսկայ-նությունը դասակարգվում է ցածր ռիսկային և ռիսկի միավոր սահմանվում է 1:

3. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻՆ ԲՆՈՐՈՇ (ԱՆՀԱՏԱԿԱՆ) ՌԻՍԿԵՐ

5. Սննդամթերքին բնորոշ անհատական ռիսկի գնահատման չափանիշներն են՝

1) արտադրողի մոտ ներդրված սննդամթերքի արտադրման որակի և անվտանգության կառավարման համակարգերը.

2) սննդամթերքի տեղափոխման պայմանները.

3) սննդամթերքի՝ խմբաքանակի զանգվածը (քանակը, ծավալը):

6. Դասակարգումն ըստ արտադրողի մոտ ներդրված կառավարման համա-կարգերի կախված է ներմուծված սննդամթերքի արտադրությունում ներդրված սննդա-մթերքի որակի և անվտանգության կառավարման համակարգերի հավաստագրերի առկայությունից կամ բացակայությունից, որոնց հավաստիությունը հնարավոր է ստուգել համացանցի միջոցով՝ համաձայն N 2 աղյուսակի:

N 2 աղյուսակ

Դասակարգումն ըստ արտադրողի մոտ ներդրված կառավարման համակարգերի

Ռիսկը	Սննդամթերքի անվտանգության կառավաման համակարգը	Միավորը
Միջին	Սննդամթերքի արտադրությունում ներդրված չեն սննդամթերքի որակի և անվտանգության կառավարման համակարգեր՝ առնվազն վտանգի վերլու-ծության և հսկման կրիտիկական կետերի համակարգ ՎՎՀԿԿ (HACCP, ISO), առկա չեն հավաստագրեր (GLOBALGAP): Երրորդ երկրներից սննդամթերքի ներմուծման դեպքում արտադրանքի՝ սննդամթերքի անվտանգությանը ներկայացվող Եվրասիական	4

	տնտեսության միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին համապատասխանում է:	
Ցածր	Սննդամթերքի արտադրությունում ներդրված են սննդամթերքի որակի և անվտանգության կառավարման համակարգեր՝ վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգ (ՎՎՀԿԿ (HACCP, ISO) առկա են հավաստագրեր (GLOBALGAP):	0

7. Դասակարգումն ըստ սննդամթերքի տեղափոխման պայմանների իրականացվում է ստվյալ սննդամթերքը տեղափոխող փոխադրամիջոցներին ներկայացվող պահանջների համապատասխանության ապահովումից ելնելով՝ համաձայն N 3 աղյուսակի:

N 3 աղյուսակ

Դասակարգումն ըստ տեղափոխման պայմանների

Ռիսկը	Տեղափոխմանը ներկայացվող պայմանները	Միավորը
Բարձր	Փոխադրամիջոցների պայմանները չեն համապատասխանում սննդամթերքի տվյալ տեսակի փոխադրմանը ներկայացվող պահանջներին:	20
Ցածր	Տեղափոխման պայմանները համապատասխանում են սննդամթերքի տվյալ տեսակի փոխադրման համար ներկայացվող պահանջներին:	0

8. Դասակարգումն ըստ ներմուծված սննդամթերքի զանգվածի (քանակի, ծավալի)՝ իրականացվում է համաձայն N 4 աղյուսակի:

N 4 աղյուսակ

Դասակարգումն ըստ զանգվածի (քանակ, ծավալ)

Ռիսկը	Զանգվածը (կգ կամ լիտր)	Միավորը
Բարձր	600-ից ավելի	4
Միջին	300-ից ավելի՝ 600-ը ներառյալ	2
Ցածր	մինչև 300-ը ներառյալ	1

4. ՌԻՍԿԻ ԱՅԼ ՉԱՓԱՆԻՇԸ

9. Ռիսկի այլ չափանիշ է՝ արագ արձագանքման միջազգային համակարգերի, այլ երկրների լիազոր մարմինների, Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության բնագավառի լիազոր մարմնի կողմից սննդի շղթայի փուլերի վերա-

հսկողության արդյունքներով սննդամթերքի վտանգավորության վերաբերյալ հաղորդումների և Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵՏՄ) անդամ երկրների կողմից լաբորատոր խիստ հսկողության սահմանման վերաբերյալ տեղեկատվության առկայությունը կամ դրա բացակայությունը՝ դասակարգվում է համաձայն N 5 աղյուսակի:

N 5 աղյուսակ

Դասակարգումն ըստ արագ արձագանքման միջազգային համակարգերի, այլ երկրների լիազոր մարմինների հաղորդումների, ԵԱՏՄ-ի միջոցով ստացված տվյալների կամ լիազոր մարմնի վերահսկողության արդյունքների

Ռիսկը	Սննդամթերքի վտանգավորության վերաբերյալ ծանուցում կամ վերահսկողության արդյունքներ	Միավորը	
Բարձր	Արագ արձագանքման միջազգային համակարգերի, այլ երկրների լիազոր մարմինների հաղորդումների, ԵԱՏՄ-ի միջոցով ստացված տվյալների կամ լիազոր մարմնի վերահսկողության արդյունքներով սննդամթերքի վտանգավորության վերաբերյալ տեղեկատվության առկայություն:	20	
Ցածր	Արագ արձագանքման միջազգային համակարգերի, ԵԱՏՄ միջոցով ստացված տվյալների կամ լիազոր մարմնի վերահսկողության արդյունքներով սննդամթերքի վտանգավորության վերաբերյալ տեղեկատվության բացակայություն:	0	

5. ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԻՍԿԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

10. Սննդամթերքի ընդհանուր ռիսկայնության դասակարգումն իրականացվում է համաձայն N 6 աղյուսակի:

N 6 աղյուսակ

Խմբաքանակի ընդհանուր ռիսկայնությունը	Միավորը
Բարձր	20 և ավել
Միջին	10-19
Ցածր	0-9

11. Ընդհանուր ռիսկայնության՝ բարձր, միջին և ցածր խմբերին դասված սննդամթերքի նկատմամբ իրականացվող վերահսկողության տեսակներն են՝

1) ընդհանուր բարձր ռիսկայնությամբ դեպքում՝ փաստաթղթային ստուգում, նույնականացում, զննում, նմուշառում, Հայաստանի Հանրապետության ազգային հավատարմագրման համակարգերում հավատարմագրված և ԵՏՄ-ի սերտիֆիկացման ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ներառված լաբորատորիաներում իրականացված լաբորատոր փորձաքննության իրականացում (այսուհետ՝ փորձաքննության իրականացում).

2) ընդհանուր միջին ռիսկայնության դեպքում՝ փաստաթղթային ստուգում, նույնականացում և զննում, իսկ սննդամթերքի անվտանգության վերաբերյալ հիմնավոր կասկածների առկայության դեպքում՝ նմուշառում և փորձաքննության իրականացում.

3) ընդհանուր ցածր ռիսկայնության դեպքում՝ միայն փաստաթղթային ստուգում և նույնականացում:

12. Եթե 11-րդ կետով սահմանված վերահսկողական գործառույթների իրականացման արդյունքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սննդամթերքի անվտանգության պահանջների հետ կապված անհամապատասխանություն չի հայտնաբերվում, ապա մեկ աշխատանքային օրվա ընթացքում թույլատրվում է սննդամթերքի տվյալ խմբաքանակի ներմուծումը:

13. Եթե 11-րդ կետով սահմանված վերահսկողական գործառույթների իրականացման արդյունքում հայտնաբերվում է անհամապատասխանություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սննդամթերքի անվտանգության պահանջներին, ապա արգելվում է սննդամթերքի տվյալ խմբաքանակի ներմուծումը և մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին պատշաճ կերպով ծանուցվում է ներմուծումն իրականացնող տնտեսավարող սուբյեկտին՝ նշելով ներմուծման արգելքի հիմքերը:

14. Եթե միևնույն կազմակերպության կողմից արտադրված միևնույն տեսակի սննդամթերքում նախկինում ներմուծման պահին կամ շուկայահանման ընթացքում հայտնաբերվել է սննդամթերքի անվտանգության պահանջների հետ կապված անհամապատասխանություն, ապա տվյալ կազմակերպության կողմից արտադրված տվյալ տեսակի սննդամթերքի հաջորդ երեք ներմուծման ընթացքում խմբաքանակի ընդհանուր ռիսկայնությունը համարվում է բարձր և վերահսկողությունն իրականացվում է 11-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ընթացակարգով:

15. 14-րդ կետով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու արդյունքում սննդամթերքի անվտանգության պահանջների հետ կապված անհամապատասխանություն չհայտնաբերելու դեպքում տվյալ կազմակերպության կողմից արտադրված տվյալ տեսակի սննդամթերքը հետագայում ներմուծելիս խմբաքանակի ընդհանուր ռիսկը հաշվարկվում է սույն հավելվածի 3-11-րդ կետերով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ